

Հ Ս Խ Հ Լ ՈՒ Ս Ժ Ռ Ղ Կ Ո Մ Ա Տ

Պրոֆ. ՀԱԳՈՒ ՄԱՆԱՆԴՅԱՆ

ԵՐԱՏՈՍԹԵՆԵՍԻ ՄՏԱԴԻՈՆԸ
Յ Ե Վ,
ՊԱՐՄԻՅ ԱՍՊԱՐԵՍԸ

Prof. Dr. AGOP MANANDIAN

DAS ERATOSTHENISCHE STADION
UND
DER PERSISCHE ASPARÉZ

Հ Ի Ա Տ Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Յ ՈՒ Ն Մ Ե Լ Ք Ո Ն Յ Ա Ն Ֆ Ո Ն Դ Ի
Յ Ե Ր Ե Վ Ա Ն 1934

Հ Ս Խ Հ Լ Ո Ի Ս Ժ Ո Ղ Կ Ո Մ Ա Տ

902.6

Մ-24

Պրոֆ. ՀԱԿՈՒՄ ՄԱՆԱՆԳՅԱՆ

ԵՐԱՏՈՍԹԵՆԵՍԻ ԱՏԱԴԻՈՆԸ

Յ Ե Վ

ՊԱՐՍԻՑ ԱՍՊԱՐԵՍԸ

Prof. Dr. AGOP MANANDIAN

DAS ERATOSTHENISCHE STADION
UND
DER PERSISCHE ASPARÉZ

10018

1236

Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Մ Ե Լ Թ Ո Ն Յ Ա Ն Ֆ Ո Ն Դ Ի
Ե Ր Ե Վ Ա Ն 1934



ԵՐԱՏՈՍԹԵՆԵՍԻ ԱՏԱԴԻՈՆԸ ՅԵՎ ՊԱՐՍԻՑ ԱՍՊԱՐԵԱԸ

1

Չափագիտական իմ աշխատութեան մեջ («Կշիռները և չափերը հնագուշին հաշ աղբյուրներում», Յերևան 1930) մատնացուցց եր արված, վոր Սորենացու «Աշխարհացուցց»-ի համառոտ ու ընդարձակ խմբագրութեաննորի մեջ, ինչպես և Անանիա Շիրակացուն վերագրված «Յաղագս ընթացից արեգական և համարոջ չափուց» հատվածում, հիշված են յերկու տարբեր ասպարեսներ՝ մեկն — «ըստ օգաչափութեան», իսկ մյուսը — «գետնաչափութեամբ»: Հայկական այս աղբյուրների վկայութեաննորը, վոր ուշադրութեան չիլին առնվել գիտական նախորդ աշխատութեաննորում, չափագանց կարևոր են, վորովհետև ասպարեսն «ըստ օգաչափութեան», ինչպես յենթադրել է յի վերոհիշյալ իմ ուսումնասիրութեան մեջ, այն աշխարհագրական ստադիոնն է, վորով հուշն աշխարհագրագետները չափել է յին յերկրի շրջապատը և աշխարհագրական աստիճանները: Այդ չափումները, ինչպես հայտնի չե, կատարել եր գիտական մեծ հմտութեամբ Աղեքսանդրիայի հուշակավոր գրադարանապետ Երատոսթենեսը (275—195 թ. նախ ք. Քր.), վորը համարվում է հիմնադիր մաթեմատիկական աշխարհագրութեան: Այնուհետև նրա ընդգծած ուղղութեամբ շարունակել են աշխատել նաև Հիպպարքոսը, Պոսելյոնիոսը, Մարինոսը, Պտղեմեոսը և ուրիշները:

Հիշյալ չափումների հիմք ծառայող աշխարհագրական ստադիոնների յերկարութեաննորը, ինչպես հայտնի չե, մինչև այժմ վեճի առարկա յեն անգամ նորագուշն ուսումնասիրութեաննորում: Երատոսթենեսի, որինակ, ստադիոնը յեվրո-

պական գիտնականները չենթադրել են վերջերս 148 մետրից մինչև 186 մետր: Ու Վիդերանտը նրա լեռկարությունը համարում է 157,5 կամ 159,8 մետր (տես Klio, XIV, էջ 207—256 և XVI, էջ 94—108), Կ. Լեման-Հաուպտը՝ հռոմեական մղոնի $\frac{1}{10}$ մասը, այսինքն՝ 148,825 մետր (տես Paulys Real-Encyklopädie der classischen Altertumswissenschaft, Neue Bearbeitung, 2 Reihe, 6. Halbband, էջ 1930—1963), Իսկ Պ. Շնարեյլը՝ հռոմեական մղոնի $\frac{3}{25}$ կամ $\frac{1}{8}$ մասը, այսինքն՝ 178,6 կամ 186 մետր (տես Sitzungsberichte der Preussischen Akademie der Wissenschaften, phil.-hist. Klasse, 1930, XVI, էջ 17):¹

Թե ինչ խոշոր նշանակութուն ունի աշխարհագրական այդ ստադիոնի վորոշումը լեռկարագիտության պատմության համար՝ այդ ինքն ըստ ինքյան հասկանալի չէ: Երատոսթենեսի ստադիոնի ճշտմամբ վնչ միայն կըվորոշվի այժմյան մետրերով նրա հաշիվը յերկրի շրջապատի մասին, այլ և հնարավոր կըլինի լուծել չափագիտական այն մոտթ խնդիրները, վոր կապ ունեն նրա ստադիոնի հետ: Յեթե ուղիղ համարվի, որինակ, Վիդերանտի կարծիքն Երատոսթենեսի ստադիոնի մեծության մասին՝ յերկրի շրջապատի չերկարությունը, վոր Երատոսթենեսը չենթադրել էր 252.000 ստադիոն, կըստացվի $252.000 \times 157,5$ [կամ 159,8] = 39.690 կիլո. [կամ 40.269.600 մետր]: Իսկ այս հաշիվից պարզ կըլինի դարձյալ, վոր անգամ յերկրորդ դարում Քրիստոսից առաջ Երատոսթենեսը ճիշտ է համեմատաբար վորոշել յերկրի շրջապատը, վորի չերկարությունը չենթադրվում է այժմ մոտ 40.000 կիլոմետր:

Արդ՝ խիստ հետաքրքիր է ու ուշագրավ, վոր հայկական աղբյուրների տեղեկություններն աշխարհագրական ստադիոնի մասին վերաբերվում են, ինչպես ցույց է տրված վերո-

¹ Հիշատակված հետազոտությունները, դժբախտաբար, չկան Յերեվանում: Երատոսթենեսի ստադիոնի մասին վերոհիշյալ տվյալները մեջ են բերված Հանս Ֆոն Մոխլի ուսումնասիրությունից, վոր տպված է «Հանդէս Ամսորեայ»-ում, 1933, Թ. 3—6, էջ 289—290:

հիշյալ իմ աշխատության մեջ, հենց Երատոսթենեսի ստադիոնին:

Քննության առնելով այդ վկայությունները և մեջ բերելով համապատասխան իմ հաշիվներն առանձին աղյուսակի մեջ՝ չես առանձնապես կարևոր ու հին էլի համարել յերրորդ հաշիվը, վորի համաձայն Երատոսթենեսի ստադիոնի չերկարությունը ստացվել էր ճշտիվ 159,8 մետր: Այդ հաշիվը չէ ընդունում սակայն Վիեննայի համալսարանի պրոֆեսոր Հանս Ֆոն Մոխլը, վորը նորերս նույն այս խնդրի մասին ընդարձակ մի ուսումնասիրութուն է հրատարակել «Հանդէս Ամսորեայ»-ում:¹ Մերժելով իմ հաշիվը՝ Հանս Ֆոն Մոխլը տալիս է ինքը մի ուրիշ հաշիվ, հիմք ընդունելով վնչ թե «Աշխարհացոյց»-ը, այլ «Յագագս ընթացից արեգական» հատվածը: Այս նոր հաշիվը, թեև հետաքրքիր է և ուշագրավ, սակայն, ինչպես կըտեսնենք, չէ կարող խախտել վնչ իմ լուծումը, վնչ էլ նրա թվական տարբեր նախադրյալները: Մենք ցույց կըտանք ներքև, վոր «Աշխարհացոյց»-ի վկայությունների նախորդ իմ լուծումը հաստատվում է այժմ նոր տվյալներով, վորոնք կարող են չելակետ ծառայել կարևոր ընդհանրացումների ու նպաստել չափագիտական նոր խնդիրների լուսաբանության, վոր վերաբերվում են պարսկական ու արևելյան չափերին:

Հույս ունեմ, վոր պրոֆ. Մոխլը, ուշադրության առնելով հայկական ու ռուսար աղբյուրների ներքև մատնանշված ցուցումները, ինքը ևս կըհամոզվի, վոր իր կասկածներն «Աշխարհացոյց»-ի վկայությունների նկատմամբ կարոտ են հիմնական վերաքննության:

¹ „Erdmessung, Grad, Meile und Stadion nach den altarmenischen Quellen“ (Ein Beitrag zur Geschichte der Erdkunde und der Kulturbeziehungen zwischen Hellenismus und Armeniertum). տես Հանդ. Ամս. 1933, Թ. 3—6, էջ 283—305, Թ. 7—8, էջ 432—459 և Թ. 9—10, էջ 559—582:

Նախ մի քանի խոսք աշխարհագրական ստադիոնին վերաբերվող հաշվական վկայությունները մասին:

Իմ «Կշիռները և չափերը» աշխատությունում մեջ չես ուղարկվել եյի այդ վկայությունները ապագիւր բնագրերից: Պրոֆ. Հանս Ֆոն Մոխլը հնարավորություն է ունեցել ողջովել նաև Վրիննայի ձեռագրերից, վորոնց ողնությունը նա սրբագրել է մի քանի ընթերցվածներ, գլխավորապես, «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրություն մեջ, Մեջ եմ բերում վերոհիշյալ վկայությունները՝ դեմ առ դեմ դնելով իմ աշխատության մեջ տպված ու Մոխլի ուղղած բնագրերը:

1. «Կշիռները յեվ չափերը», էջ 99՝

«Եւ է ասպարէզն ըստ օգաշափութեան քայլս հարիւր, և քայլն վեց ոտն, և ոտն վեցասասն մատն. մզոնն ասպարէզ մի: Իսկ ասպարիցաց ասպարէզն է հարիւր քառասուններք քայլ, և մզոնն է եւթն ասպարէզ, որպէս զի լինել գետնաշափութեամբ մզոնն հազար քայլ, և փարսախն երեք մզոն է» (տես «Մովսէսի խորհրդացոյ մատենագրութիւնք», էջ 588):

2. «Կշիռները յեվ չափերը», էջ 103՝

«Ասպարէզն է ըստ օգաշափութեան քայլ 107. և քայլն 6 ոտն. և ոտն 16 մատն եւ մզոնն 7 ասպարէզ: Իսկ ըստ Պարսից ասպարիսին 143 քայլ, որպէս լինել գետնաշափութեամբ մզոնն 1000 քայլ: Եւ իրասխն 3 մզոն» (տես Ավգիւրյան, «Բացատրութիւն չափուց և կշուց նախնեաց», Վենետիկ 1821, էջ 37. հմտոս նաև «Անանիայի Շիրակունոյ, Մնացորդք բանից», Ս. Պետերբ. 1877, էջ 32—33):

1. Հանդ. Ամս. 1933, Թ. 3—6, էջ 300՝

«Եւ է ասպարէզն ըստ ագաշափութեան քայլ ձ. և քայլն է 2 ոտն. և ոտն է ԺԶ մատն. և մզոնն է է ասպարէզ: Իսկ ասպարիցաց ասպարէզն է ձեթ քայլ, և մզոնն է է ասպարէզ, որպէս զի լինել գետնաշափութեամբ մզոնն Ռ քայլ: Եւ իրասխն Գ մզոն է»:

2. Հանդ. Ամս. 1933, Թ. 3—6, էջ 293՝

«Ասպարէզն է ըստ ագաշափութեան քայլ ձե. և քայլն 2 ոտն, և ոտն ԺԶ մատն եւ մզոնն է ասպարէզ: Իսկ ըստ Պարսից ասպարէզն ձեթ քայլ. որպէս լինել գետնաշափութեամբ մզոնն Ռ քայլ: Եւ իրասխն Գ մզոն»:

Յ. «Կշիռները յեվ չափերը», էջ 106՝

«Եւ ասպարէզն հեռակցութիւն վաստանի, և ըստ օգաշափութեանն հարիւր եոթն քայլ, և քայլն վեց ոտն, և ոտն վեցասասն մատն. և լինի ասպարէզն վեցհարիւր քառասուն և երեք ոտն միով պակաս եւ մզոնն է եոթն ասպարէզ. իսկ Պարսիցն ասպարէզն է հարիւր քառասուն և չորս քայլ, և գետնաշափութեամբ՝ հազար քայլ, և հրասխն է երեք մզոն» (տես «Աշխարհացոյց Մովսէսի Խորհրդացոյ յաւելուածովք նախնեաց», հրատ. Ս. Մուքրյանի, Վենետիկ 1881, էջ 7):

Յ. Հանդ. Ամս. 1933, Թ. 3—6, էջ 295՝

«Եւ ասպարէզն հեռակցութիւն վաստանի, և ըստ ագաշափութեանն հարիւր եոթն քայլ, և քայլն վեց ոտն, և ոտն վեցասասն մատն. և լինի ասպարէզն վեցհարիւր քառասուն և երեք ոտն միով պակաս: Եւ մզոնն է եոթն ասպարէզ. իսկ Պարսիցն ասպարէզն է հարիւր քառասուն և երեք քայլ, և մզոնն գետնաշափութեամբ հազար քայլ, և հրասխն է երեք մզոն»:

Չափական իմ հաշիվները համար, ինչպես տեսնում ենք, միակ կարևոր փոփոխությունն է վերջին վկայության մեջ հետևյալ սրբագրությունը՝ «Իսկ Պարսիցն ասպարէզն է հարիւր քառասուն և երեք քայլ»: Սուքրյանի հրատարակած բուն ու միակ բնագիրն ունի՝ «Իսկ Պարսիցն ասպարէզն է հարիւր քառասուն և չորս քայլ»: Մատնանշված սրբագրությունն արել է ինքը Մոխլը, համարելով «չորս» ընթերցվածը գրչագրական պարզ ու անառակելի մի սխալ¹: Այս սրբագրությունը սակայն, ինչպես կը տեսնենք, վրձնելի չէ և առակելի: Հարկավոր էր, անշուշտ, պահել հայերեն բնագրում, ինչպես և գերմաներեն թարգմանության մեջ, «չորս» ընթերցվածը, իսկ «երեք»-ը՝ իբրև հրատարակողի չնթագրություն՝ դնել փակագծի մեջ:

¹ Մոխլի գերմաներեն հոդվածի հայերեն ամփոփման մեջ թշուշը մտաբար ասված է, վոր իբր թէ իմ աշխատության մեջ «չստ անգամ իբրև գրչագրական սխալ» չես արձամարած եմ «ինչ որ անհամաձայն» գտած եմ իմ հաշիվն (Հանդ. Ամս., 1933, Թ. 3—6 էջ 282): Այդ միանգամայն սխալ եւ Ընդհանրապես՝ հայկական վկայությունները մի քանի ընթերցվածներն արձամարված են իբրև գրչագրական սխալ վնջ թէ իմ ալ Մոխլի աշխատության մեջ:

Ձեռագիրները համեմատութեամբ ՄԺԻԿԻ վերահրատա-
րակած բնագրերը կարևոր են, անշուշտ, վորովհետև ասպարի-
սական չափերի ճշտման համար նա ոգտվել է Վիեննայի
(Թ. 31, 115, 678, 731, 784) և մի քանի այլ ձեռագիրների
վկայութիւններին: Միանգամայն պարզ է սակայն, վոր այս
հրատարակութեանը, վորը կատարված է բազմազան աղ-
բյուրների համադրութեամբ ու համեմատութեամբ, և վոչ մի
կետում չէ խախտում այն նախադրյալները, վոր հիմք էջին
ճառագիւլ իմ աշխատութեան:

3

Վերոհիշյալ վկայութիւնների լուսաբանման համար
իրբև լուծման բանալի ծառայել էր ինձ Պարսից կամ «աս-
պարիզաց ասպարէզ»-ը, վորը չես համապատասխան եյի
համարել արաբական ghalva-յին: Ընդունելով այս ասպարեսի
չերկարութիւնը 230,112 մետր՝ չես արել էջի իմ աշխա-
տութեան մեջ բոլոր հնարավոր հաշիվները՝ հիմք ընդունելով
վկայութիւնների տարբեր ու անգամ վիճելի թվերը: Ի վերջո՝
համադրելով բոլոր հաշիվներն առանձին աղյուսակի մեջ՝ չես
հանգել էջի այն չեղրակացութեան, վոր ստացված թվերից
իրական են ու խիստ կարևոր թվական տվյալները, գլխա-
վորապես, չերրորդ հաշվի (տես «Կշիռները և չափերը»,
էջ 110)՝

1. Պարսից կամ «ասպարիզաց ասպարէզ» -ը = 144
քայլ = 230,112 մետր.

2. Քալլը (վորը կրկնաքալլ է) = 230,112 : 114 =
= 1,598 մետր.

3. Ասպարեսն «ըստ օգաչափութեան» (Երատոս-
թենեսի ստադիոնը) = 100 քալլ = 1,598 × 100 =
= 159,8 մետր.

4. Ոգաչափութեան ասպարեսի (Երատոսթենեսի
ստադիոնի) վորը = $\frac{1}{6}$ քալլ = 1,598 : 6 = 0,266 $\frac{1}{3}$ մետր.

5. Պարսից մղոնը = 1000 քալլ = 1,598 × 1000 =
= 1.598 մետր:

Պրոֆ. Հանս Ֆոն ՄԺԻԿԻ անընդունելի չէ համարում,
նախ և առաջ, այս հաշիվները հիմք ծառայող լուծման բա-
նալին, այսինքն՝ Պարսից ասպարեսի և մղոնի վերոհիշյալ
չերկարութիւնները (230,112 մետր և 1.598 մետր): Պար-
սից այս ասպարեսն ու մղոնը նա յինթադրում է վոչ թե
պարսկական, այլ հռոմեական չափեր: Պրոֆ. ՄԺԻԿԻ ընդու-
նում է միմիայն, վոր ճիշտ է ստացվել իմ հաշվում Երա-
տոսթենեսի ստադիոնի չերկարութիւնը: Սակայն այդ, նրա
կարծիքով, մի պատահականութիւն է, վոր առաջ է չեկել
սխալ նախադրյալների բախտավոր զուգադիպումից (Հանգ.
Ամս., 1933, Թ. 3—6, էջ 572): Պրոֆ. ՄԺԻԿԻ պնդում է
նույնպես, վոր «Աշխարհացոյց»-ի համառոտ ու ընդարձակ
լումբադրութիւններում «քալլս հարիւր» և «հարիւր քառա-
սուն և չորս» ընթերցվածները գրչագրական սխալներ են:

Մատնանշված այս պնդումները, վոր գրեթե չեն պատ-
ճառաբանված, չեն կարող ըստ իս ճիշտ լինել, վորովհետև
վերոհիշյալ իմ հաշիվը հաստատվում է, ինչպես կրտսնենք,
նոր ու հիմնավոր վկայութիւններով:

Իմ «Կշիռները և չափերը» լույս տեսնելուց հետո՝ Պար-
սից ասպարեսի մասին հաջողից ինձ գտնել կարևոր մի
վկայութիւն «Մղոնաչափք»-ի ընդարձակ բնագրում,¹ Պե-
տական Կենտրոնական Ձեռագրատան Թ. 2679 հոչակավոր
հին ձեռագրի մեջ (= Գևորգ. Յուլյակ, Թ. 102), վոր գրված
է 971—981 թվականներին: Նոր այս բնագրի հենց սկզբում
այդ վկայութիւնը մեջ է բերված պարզապես այն նպատա-
կով, վորպես զի վորոշ լինի այն մղոնների չերկարութիւնը,
վոր գործ են անված «Մղոնաչափք»-ի մեջ: Կարևոր այդ
վկայութիւնը, վոր մանրամասն քննված է Ռուսաստանում
լույս տեսնող վերոհիշյալ իմ աշխատութեան մեջ՝ հետևյալն է՝

«Ասպարէզն ձ՛շ քալլ է. քալլն Զ ոտն է, ոտն ԺԶ

¹ «Մղոնաչափք»-ի այդ նոր բնագիրն իմ ուսումնասիրութեամբ
հանդիւրձ հրատարակելու չէ Լենինգրադում հետևյալ վերնագրով «Сред-
невековой итинерарий в армянской рукописи десятого столетия»:

մասն է. մղոնն է ասպարեղ է. ըստ Պարսից ասպարեղն ճՆԳ քայլ է. մղոնն Թ քայլ է. հրասահն Գ մղոն» (Չեռ. 2679, Թերթ 206ա, ստուգված 208ա):

Այս հաշիվը լուծելիս՝ պետք է ի նկատի ունենալ, վոր առաջին ասպարեսի 170 քայլ չերկարութունը նշանակված է կրոր թվով: Իժվար չե սակաչն կուհեկ, վոր այս ասպարեսը պետք է չենթադրել $1\frac{1}{7}$ մասը մի մեծ մղոնի, վորի չերկարութունը յեղել է 1200 քայլ: Ուրեմն՝ այս ասպարեսը կարելի չե, իրապես, հավասար համարել 1200:7 կամ $171\frac{3}{7}$ քայլի: Պարսից ասպարեսի չերկարութունը ցույց է տրված «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրության մեջ 144 քայլ ($=230,112$ մետր): Յեթե սակաչն ընդունենք, վոր այդ ասպարեսն ուղիղ $1\frac{1}{7}$ մասն է չեղել Պարսից մղոնի ($=1598$ մետր)՝ նրա չերկարութունը կըլինի $1598:7=228\frac{2}{7}$ մետր: Ընդունելով Պարսից ասպարեսը համապատասխան արաբական ghalva-յի և հավասար $230,112$ մետրի [կամ $228\frac{2}{7}$ մետրի= $142\frac{6}{7}$ քայլ]՝ կարող ենք հեշտությամբ վորոշել «Մղոնաչափք»-ի վկայության բոլոր չափերը հետևյալ չերկարությամբ՝

1. Պարսից ասպարես= 144 քայլ [$142\frac{6}{7}$]= $230,112$ մետր [$228\frac{2}{7}$].

2. «Քայլ» կամ կրկնաքայլ $=230,112:144$ [$228\frac{2}{7}:142\frac{6}{7}$]= $1,598$ մետր.

3. Պարսից մղոն $=1000$ քայլ $=1598$ մետր.

4. Վոտ $=\frac{1}{6}$ քայլ $=1,598:6=0,266\frac{1}{3}$ մետր.

5. Մաս $=\frac{1}{16}$ վոտ $=0,266\frac{1}{3}:16=0,016\frac{31}{48}$ մետր.

6. Ասպարես (մչուս) $=\frac{1200}{7}$ քայլ $=1,598 \times \frac{1200}{7} = 273,9\frac{3}{7}$ մետր.

7. Մղոն (արաբական) $=1200$ քայլ $=1,598 \times 1200 = 1917,6$ մետր.

8. Փարսախ (արաբական) $=3$ մղոն $=1917,6 \times 3 = 5752,8$ մետր [$=25$ Պարսից ասպարեսի կամ ghalva-յի $=5752,8:230,112=25$].

Կերելի՛ չե միթե պատահական համարել, վոր այս հաշիվում ևս ստացվում են իրական ու ծանոթ թվեր: «Մղոնաչափք»-ի մղոնը և փարսախը, ինչպես տեսնում ենք, ճիշտ և ճիշտ համապատասխան են ստացվում արաբական մղոնին ($=1917,6$ մետր) և արաբական փարսախին ($=5752,8$ մետր): Վերոհիշյալ ուսեսերին իմ աշխատության մեջ ցույց է տրված, վոր «Մղոնաչափք»-ը գրված է իններորդ դարում: Հասկանալի չե, ուրեմն, թե ինչու նրա մեջ, ինչպես և արաբական ուղեցույցներում, տարածութունները նշանակված են արաբական մղոնով, վորի չերկարությունն աշխարհագրագետները հաշվում են մոտավորապես 2 կիլոմետր,¹ իսկ Դեկլորդեմանը չենթադրում է համեմատական իր չափագիտության մեջ $1,917,6$ մետր (տես Traité pratique des poids et mesures des peuples anciens et des arabes, Paris 1909, էջ 88):

Վոր «Մղոնաչափք»-ի մղոնն ունեցել է, իբրք, վերոհիշյալ չերկարությունը՝ այդ կարելի չե ստուգել հենց «Մղոնաչափք»-ի վկայութուններով: Նրա մեջ, որինակ, տարածութունը Դվինից Նախիջևիվան ցույց է տրված 70 մղոն, վոր վերոհիշյալ հաշվով հավասար է 134 կիլ. ($1,917,6 \times 70 = 134,232$ կիլ.): Հենց այդքան է մոտավորապես և այժմյան տարածությունը Դվին-Արտաշարից մինչև Նախիջևիվան:

Միանգամայն պարզ է, ուրեմն, վոր վնչ միայն հավանական է ամբողջ մեր հաշիվը, այլ և Պարսից ասպարեսի և մղոնի չերկարութունները, վոր չենթադրել ենք $230,112$ [$228\frac{2}{7}$] և $1,598$ մետր:

Յեթե հայկական աղբյուրներում անհայտ չափերը՝ ողաչափության ասպարեսը և արաբական մղոնը՝ վորոշված են Պարսից ասպարեսի և Պարսից մղոնի համեմատությամբ՝ այդ կարելի չե ըստ իս բացատրել նրանով, վոր պարսկական այս ասպարեսն ու մղոնը հայտնի ու ծանոթ չափեր են չեղել հին Հայաստանում: Ուշագրավ է այդ տեսակետից, վոր Խո-

¹ Պրոֆ. Մարկվարտը, որինակ, արաբական մղոնը հավասար է ընդունում $1\frac{1}{3}$ հոմեոսական մղոնի (տես Osteuropäische und ostasiatische Streifzüge, Leipzig 1903, էջ 212 և 238):

բնացու պատմութեան մեջ հիշատակված ասպարեսը (II, 10, եջ 166, Տիգրիս 1913), ինչպես այդ չերևում է Աճառչանի «Անահիտ»-ում տպած հոդվածից (1933), համապատասխանում է իր չերկարութեամբ Պարսից ասպարեսին և արաբական ghalva-յին (=230,112 մետր):

Թե ինչն արաբական ghalva-ն համաչափ է չեղել Պարսից ասպարեսին՝ այդ ես դժվար չե բացատրել: Միանգամայն հասկանալի չե, վոր այդ ասպարեսը, վորը հանրածանոթ չափ է չեղել Մերձավոր Արևելքում, կարող եր պահպանված լինել արաբական տիրապետութեան ժամանակ, անվանվելով ghalva, վոր նշանակում է «նետածիգ»: Վոր այս չենթադրութեանը հավանական է՝ այդ կարելի չե կռահել հաջկական աղբյուրների հենց ցուցումներից, վորոնք վկայում են, վոր «ասպարէզն մէկ նետածիգ է» (տես Հանդ. Ամս. 1933, Թ. 3—6, եջ 302 և 304): Ինձ թվում է, վոր նման վկայութեաններում ակնարկված են, հավանորեն, Պարսից կամ «ասպարիզաց ասպարէզ»-ը և նրան համապատասխանող արաբական «նետածիգ»-ը:

Կարող ենք մեջ բերել նաև մի ուրիշ ասպարէզ, վորը մի նոր կովան է դարձյալ «Մղոնաչափք»-ի վկայութեան վերոհիշյալ լուծման: Պրոֆ. Մժիկը մասնացուց է արել իր ուսումնասիրութեան մեջ, վոր Իբն Սիդան լիաչափ փարսախը հավասար է համարում 25 ghalva-յի (տես Հանդ. Ամս., 1933, Թ. 7—8, եջ 458): «Մղոնաչափք»-ի վերոհիշյալ իմ հաշիվը հաստատվում է, ինչպես տեսնում ենք, նաև այս վերջին վկայութեամբ: Համապատասխան հենց Իբն Սիդայի վկայութեան ստացվել եր նաև իմ հաշվում արաբական փարսախի և ghalva-ասպարեսի հետևյալ հարաբերութեանը՝

1. Պարսից ասպարեսը կամ ghalva-ն = 230,112 մետր.

2. Արաբական փարսախը = 5.752,8 մետր.

3. Փարսախի ու ghalva-յի հարաբերութեանը = 5752,8:230,112 = 25:1:

Նոր այս դիտողութեանները, թվում է ինձ, ուշագրավ

ասպարէզներ են, վոր կարևոր այս խնդրի լուծումը կարող ենք համարել բավարարչափ հիմնավորված և Պարսից ասպարեսի չերկարութեանն ընդունել 230,112 [228²/] մետր: Իսկ այս յեղբակացութեանից ինքնին արդեն հետևում է, վոր ճիշտ պիտի լինեն նաև Երատոսթենեսի ստադիոնի լուծման մյուս նախադրյալները՝ այսինքն՝ վոր ողաչափութեան ասպարեսը հավասար է 100 քայլի և քայլը 6 վոտի:

«Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրութեանն ողաչափութեան ասպարեսի մասին ունի, ինչպես վերև տեսանք, հետևյալ վկայութեանը՝ «եւ է ասպարէզն ըստ օղաչափութեան քալս հարիւր, եւ քալսն վից ոտն, և ոտն վիշտասան մատն»: Այս վկայութեան մեջ «քալս հարիւր» ընթերցվածը չե կարող ըստ իս լինել գրչագրական սխալ, ինչպես այդ յենթադրում է պրոֆ. Մժիկը (Հանդ. Ամս., 1933, Թ. 7—8, եջ 455—456): Ընդհակառակը՝ թե այդ ընթերցվածը և թե ամբողջ վկայութեանը, վոր անաղարտ պահպանվել են հին և ընտիր ձեռագիրներում, միանգամայն ստույգ են և առանձնապես կարևոր, վորովհետև նրանք վորոշում են վնչ միայն Երատոսթենեսի ստադիոնը, այլ և այդ ստադիոնին հիմք ծառայող քայլը և վոտը:

Իմ «Կշիռները և չափերը» լույս տեսնելուց հետո հաջողից ինձ, բարեբախտաբար, ստանալ արտասահմանից Հուլչի չափագիտական ընդարձակ աշխատութեանը (Fr. Hultsch, Griechische und römische Metrologie, zweite Bearbeitung, Berlin 1882): Երատոսթենեսի ստադիոնը, ինչպես հայտնի չեղալ ինձ այդ աշխատութեանից, ճիշտ է վորոշած չեղել հենց Հուլչը, իսկ խառնաշփոթ ու սխալ հաշիվներն ընդունելի յեն համարվել նորագույն միայն չերկերում: Հուլչը վորոշել է Երատոսթենեսի ստադիոնը, հիմնվելով Պլինիոսի վկայութեան վրա: Այդ վկայութեան ուղիղ լուսաբանութեամբ ճշտվում են, ինչպես կրտեսներնք, վնչ միայն Երատոսթենեսի ստադիոնը, այլ և այդ ստադիոնին հիմք ծառայող Երատոսթենեսի քայլը և վոտը: Յեւ առանձնապես կարևոր է ու հետաքրքիր, վոր «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրութեան

«քայլս հարիւր» ընթերցվածը հաստատվում է ճշտիվ նաև այս կարևոր վկայութիւնամբ:

Պլինիոսի վկայութիւնը մեջ եմ բերում անփոփոխ:

«Սքոյնոսը — ասում է Պլինիոսը-հավասար է համաձայն Երատոսթենեսի հաշվի 40 ստադիոնի. վոմանք համարում են սքոյնոսը 32 ստադիոն» (Nat. Hist. XII, 30,2):

Հուլյը միանգամայն ճիշտ է վորոշել ըստ իս, վոր այս վկայութեան մեջ սքոյնոսը յեզիպտական աչն մեծ չափն է, վորի յերկարութիւնը հավասար է յեղի 12,000 յեզիպտական արքայական կանգունի: Այս կանգունը, վորի յերկարութիւնը հաստատուն կերպով վորոշված է, հավասար է համարում նա 0,525 ալթմյան մետր. ուստի և Պլինիոսի վկայութեան չափերը ստացվել են նրա մոտ հետևյալ յերկարութիւնամբ (տես Metrologie, էջ 61)՝

1. Յեզիպտական արքայական կանգունը = 0,525 մետր.

2. Յեզիպտական սքոյնոսը = 1200 արք. կանգուն = $12.000 \times 0.525 = 6.300$ մետր.

3. Երատոսթենեսի ստադիոնը = $\frac{1}{40}$ յեզիպտ. սքոյնոս = $6.300 : 40 = 157,8$ մետր.

4. Երատոսթենեսի վոտը = $\frac{1}{2}$ արք. կանգուն = $0,525 : 2 = 0,2625$ մետր:

Յեթե իմ հաշվի մեջ Երատոսթենեսի ստադիոնի և վոտի յերկարութիւնները ստացվել են 159,8 և $0,266\frac{1}{3}$ մետր՝ դրա պատճառն այն է, վոր հռոմեական չափերի համեմատութիւնամբ յեզիպտական արքայական կանգունը համարվել է, ինչպես այդ յերևում է հենց Հուլյի աշխատութիւնից (Metrologie, էջ 609—610), $0,532$ մետր [ալիլի ճիշտ՝ $0,532\frac{2}{3}$ մետր]: Ուստի և իմ հաշվում Երատոսթենեսի վոտը հավասար է՝ $0,532\frac{2}{3} : 2 = 0,266\frac{1}{3}$ մետր, իսկ Երատոսթենեսի ստադիոնը՝ $0,266\frac{1}{3} \times 600 = 159,8$ մետր:

Հուլյի մոտ անհավանական են, իմ կարծիքով, և վիճելի Պլինիոսի վկայութեան վերջին մասի մեկնութիւնը: Նա

թեև ճիշտ է բացատրել, վոր Պլինիոսի մոտ սքոյնոսը սխալմամբ հավասար է համարված 5000 հռոմեական քայլի կամ 40 ստադիական ստադիոնի (= 125 հոմ. քայլ), սակայն նա ուշադրութեան չէ առել, վոր Պլինիոսը միաժամանակ մատնանշել է նաև իր ձեռքի տակ յեղած աղբյուրների հաշիվը, վորոնք սքոյնոսը համարել են 32 ստադիոն, այսինքն՝ 4000 քայլ ($32 \times 125 = 4000$): Հուլյի յենթադրութիւնը, վոր իբր թէ այդ ստադիոնները փոքրասիական են ու հավասար 196,9 մետրի (Metrologie, էջ 570—572), ըստ իս հավանական չէ: Պլինիոսի վկայութեանից պարզպես հետևում է, վոր նրա աղբյուրները յեզիպտական սքոյնոսը հաշիվել են, հակառակ իր յենթադրութեան, վնչ թէ 5000, այլ 4000 քայլ կամ 32 ստադիոն: Իսկ այս 4000 քայլը կամ ալիլի ճիշտ կրկնաքայլը համարվելու յին ըստ իս վնչ թէ հռոմեական կամ փոքրասիական, ինչպես սովորաբար յենթադրում են, այլ հատուկ Երատոսթենեսի: Պլինիոսի, ինչպես և «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրութեան վկայութիւններից, պարզվում է, ուրեմն, վոր Երատոսթենեսի հատուկ «քայլ»-ի կամ կրկնաքայլի յերկարութիւնը պէտք է ընդունել 1,598 մետր (յեզիպտական սքոյնոսը = 12.000 արք. կանգուն = $12.000 \times 0,532\frac{2}{3} = 6.392$ մետր, իսկ «քայլ»-ը = $6.392 : 4000 = 1,598$ մետր):

«Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրութեան վկայութիւնն ուշադրով է, ինչպես տեսնում ենք, այն տեսակետից, վոր նրա ոգնութեամբ վորոշվում են վնչ միայն Երատոսթենեսի ստադիոնը և վոտը, այլև նրա հատուկ «քայլ»-ը կամ կրկնաքայլը.

1. Երատոսթենեսի ստադիոնը = 100 քայլ = $= 159,8$ մետր [Hultsch՝ 157,5 մետր].

2. Երատոսթենեսի «քայլ»-ը = 6 վոտ = $159,8 : 100 = = 1,598$ մետր.

3. Երատոսթենեսի վոտը = $1,598 : 6 = 0,266\frac{1}{3}$ մետր [Hultsch՝ 0,2625 մետր]:

Այս հաշիվը, վոր համապատասխանում է Պլինիուսի և համառոտ «Աշխարհացոյց»-ի վկայութիւններին, կարելի չէ, ինձ թվում է, համարել վերջնական ու անտարակուսելի: Միանգամայն հասկանալի չէ, վոր Երատոսթենեսին, վորը Հունաստանից Ադիքսանդրիա չէր յեկել չերրորդ դարում Քրիստոսից առաջ, հայտնի չին չեղել, գլխավորապես, հունական և չեգրիպտական չափերը: Նա համարել է իր ստադիոնը, ընականաբար, հունական չափերի համեմատ 100 orgyia կամ կրկնաքայլ և 600 վոտ: Հենց այդպես էլ ճշտիվ ունի «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրութիւնը՝ «ասպարէզն ըստ օգտափութեան քայլս հարիւր, և քայլն վեց ոտն»: Միանգամայն պարզ է նույնպես, վոր համառոտ այս խմբագրութեան «քայլս հարիւր» լնթերցվածը չէ կարող լինել գրչագրական սխալ, ինչպես այդ թյուրիմացաբար կարծում է պրոֆ. Մժիկը:

Անհավանական կըլինի ըստ իս գրչագրական սխալ չինթադրել նաև «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրութեան «Պարսիցն ասպարէզն է հարիւր քառասուն և չորս քայլ» ընթերցվածը: Պրոֆ. Մժիկն ուշադրութեան չէ առել համապատասխան հատվածների տարբեր խմբագրութիւններն ընդարձակ «Աշխարհացոյց»-ում և մյուս վկայութիւններում: Այդ հատվածները կարևոր եմ համարում դնել դեմ առ դեմ.

1. «Աշխարհացոյց»-ի համ. խմբագրութ.

«Իսկ ասպարիզաց ասպարէզն է հարիւր քառասուն և երեք քայլ. եւ մղոնն է եւթն ասպարէզ, որպէս զի լինել գետնաչափութեամբ մղոնն հազար քայլ»:

2. «Յաղագս ընթացից արեգական».

«Իսկ ըստ Պարսից ասպարիսին ձեռք քայլ, որպէս լինել գետնաչափութեամբ մղոնն Ռ քայլ»:

3. «Աշխարհացոյց»-ի ընդարձ. խմբագրութ.



«Իսկ Պարսիցն ասպարէզն է հարիւր քառասուն և չորս քայլ. եւ [մղոնն] գետնաչափութեամբ հազար քայլ»:

Համեմատելով այս հատվածները՝ պարզ տեսնում ենք, վոր առաջին չերկու վկայութիւններում Պարսից կամ «ասպարիզաց ասպարէզ»-ը հաշվված է 143 քայլ ($= \frac{1000}{7} = 142\frac{6}{7}$), վորպես զի գետնաչափութեան մղոնը հավասար լինի 1000 քայլի, իսկ չերրորդ վկայութեան մեջ «որպէս զի լինել» կամ «որպէս լինել» խոսքերը բացակայում են: Ինձ թվում է, վոր «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրութեան մեջ այդ բաները չկան այն պարզ պատճառով, վոր չերրորդ հատվածի հեղինակը Պարսից իրական ասպարիսը համարել է մղոնի $\frac{1}{7}$ մասը վնջ թե ճշտիվ, այլ մոտավորապես: Անհավանական չէ ըստ իս, վոր հայկական մյուս աղբյուրները ձեռք ընթերցվածը հետագայում կատարված նպատակավոր մի ուղղում է, վորպես զի Պարսից կամ «ասպարիզաց ասպարէզ»-ի չերկարութիւնը լինի ճշտիվ $\frac{1}{7}$ մղոն ($= \frac{1000}{7} = 142\frac{6}{7}$, կրող թվով 143):

Այս խնդրի վրա չես առանձնապես կանգ չեմ առնում, վորովհետև իմ առաջարկած ձեռք ընթերցվածի մերժումը չէ կարող անդրադառնալ Երատոսթենեսի ստադիոնի և «Մղոնաչափք»-ի վկայութեան վերոհիշյալ լուծումների վրա: Այդ լուծումները հիմնված են վնջ միայն Պարսից կամ «ասպարիզաց ասպարէզ»-ի, այլ և Պարսից մղոնի չերկարութեան վրա: Ընդունելով անգամ, վոր Պարսից ասպարիսը հավասար է չեղել $142\frac{6}{7}$ քայլի — վոր չես անհավանական եմ համարում — նրա չերկարութիւնը կըստացվի վնջ թե 230, 112, այլ 228 $\frac{2}{7}$ մետր ($1598 : 7 = 228\frac{2}{7}$), սակայն Պարսից մղոնը և Երատոսթենեսյան ու արաբական բոլոր վերոհիշյալ չափերը կըմնան, այնուամենայնիվ, անփոփոխ ու հաստատուն:

Մնում է մեզ պարզել, վոր արաբական աիրապետութեանից առաջ վնջ միայն Պարսից կամ «ասպարիզաց ասպարէզ»-ը, այլ և Պարսից մղոնը գոյութիւն է ունեցել՝ իբրև իրական ու գործածական չափ՝ Սասանյան Պարսկաստանում և, ամենայն հավանականութեամբ, նաև Հայաստանում:

Պետք է ասել, վոր հատկապես այս կետում Դեկլարե-



մանշի տվյալներն (տես Traité pratique, էջ 82 և 88) ավելի հավանական են, քան Հուլիանը, վորին հետևում է պրոֆ. Մժիկը: Հուլիը, հակառակ պարսկական հին աղբյուրների վկայության, պարսկական նոր մղոնը համարում է 900 կրկնաքալ և 1700 արքայական կանգոն, հավասար 1420 մետրի (տես Metrologie, էջ 477): Նրա այս չենթադրական հաշիվը, ինձ թվում է, վիճելի չէ ու անհավանական, վորովհետև պարզապես հակասում է սկզբնական աղբյուրների վկայություններին, վորոնք մեջ են բերված հենց իր աշխատության մեջ (Metrologie, էջ 477, ծան. 2): Bûndahisch-ում, ինչպես հայտնի չէ, մատնանշված է ճշտիվ, վոր hâsar-ը («հազար») կամ մղոնը կազմում է պարասանգի մեկ քառորդը, իսկ պահլավերեն հին բառարանում պարզ ու վորոշ ասված է, վոր hâsar-ը 1000 քալ է, այսինքն՝ կրկնաքալը Պարսկական մղոնի նույն յերկարությունը մատնացույց է արված Անանիա Շիրակացու վերագրված «Աստեղաբաշխութեան» մեջ (տես Ավգերյան «Բացատրութիւն չափուց և կշռոց», էջ 46): Այս վկայությունները վերաբերվում են, անշուշտ, Սասանյան Պարսկաստանի մղոնին, վորն անվանված է hâsar: Պարզ է, ուրեմն, վոր պարսկական նոր մղոնի յերկարությունը չէ կարելի համարել 900 կրկնաքալ, ինչպես այդ չենթադրում է Հուլիը:

Արդ՝ ինչպես ճիշտ վորոշել է հենց ինքը Հուլիը, աղբյուրներում մատնանշված քալը կամ կրկնաքալը հավասար պիտի ընդունել 3 արքայական կանգունի, վորի յերկարությունը մենք հաշիվել եյինք վերև 0,532²/₃ մետր, իսկ Հուլիը՝ 0,525 մետր: Ստացվում է, ուրեմն, վերոհիշյալ վկայությունների հետևյալ լուծումը՝

1. կրկնաքալ = 3 արք. կանգուն = 0,532²/₃ × 3 = 1,598 մետր. [ըստ Հուլիի՝ 0,525 × 3 = 1,575 մետր].

2. Մղոն կամ hâsar = 1000 կրկնաքալ = 1.598 մետր [1575].

3. Պարասանգ = 4 մղոն = 1.598 × 4 = 6.392 մետր [6300].

Այս լուծման մեջ պարասանգը հավասար է ստացվում, ինչպես տեսնում ենք, չեզիպտական սքոյնոսին, վորի յերկարությունը վորոշված է 12.000 չեզիպտական արքայական կանգուն կամ 6392 [6300] մետր: Յեվ պարասանգի այս յերկարությունը միանգամայն հավանական է, վորովհետև նապուչն Հերոնյան աղյուսակը, ինչպես և աղեքսանդրյան ու հելլենական չափագետները, վկայում են վորոշակի, վոր չեզիպտական սքոյնոսը և պարսկական պարասանգը յեղել են հավասարաչափ (տես Hultsch, Metrologie, էջ 478, 569, 570 և 612):

Վոր Հուլի չենթադրությունը պարսկական նոր մղոնի մասին առարկելի չէ ու վիճելի, այդ յերևում է այժմ և հաշկական աղբյուրների վերև քննված վկայություններից, վորոնց մեջ հիշատակված են, ինչպես տեսանք, պարսկական նույն մղոնը (= 1598 մետր) և համապատասխան կրկնաքալը (= 1,598 մետր):

Պարզվում է ըստ այսմ, վոր արաբական տիրապետությունից առաջ Սասանյան Պարսկաստանում գործածական է յեղել արևելյան այն մղոնը, վորը չափագիտություն մեջ անվանվում է փիլետերյան-հոմեական: Քսկ այս հետևությունները, վոր խիստ կարևոր է համեմատական չափագիտության համար, դուրսով հասկանալի չէ, վորովհետև փիլետերյան չեն յեղել, ինչպես հայտնի չէ, յերկարությունը չափերը Պերգամոնում, Յեզիպոսում և, հավանորեն, արևելյան նաև ուրիշ չերկիրներում:

Վ ֓ Փիլետերոս, ինչպես հայտնի չէ, Պերգամոնի թագավորության հիմնադրի անունն է և նրա հաջորդների մականունը: Յերև հոմալեցիները նվաճելին Պերգամոնը և դարձրին հոմեական նահանգ (129 թ. Ք. առ.)՝ նրանք պահեցին այսուպ տեղական չափերը, վորոնք Պերգամոնի թագավորների անունով կոչվում էյին փիլետերյան: Այնուհետև նրանք բոլոր նման չափերը, վոր գործածական էյին Պատլեմյան Յեզիպոսում և արևելյան ուրիշ չերկիրներում, անվանում էյին դարձյալ փիլետերյան: Այդ չափերը նրանք հարմարեցրին իրենց չափական սիստեմին և գործ էյին անում այնուհետև իբրև փիլետերյան-հոմեական չափեր, զլիսավորապես, արևելյան չերկիրներում:

Նոր այս յենթադրությունը Պարսից մզոնի և Պարսից ասպարեսի մասին հիմնավորված է, ինչպես տեսնում ենք, փաստական ուշագրավ դիտողություններով: Կարող ենք, ուրեմն, միանգամայն հավանական համարել վոր «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրության մեջ, վորը հիմք էր ծառայել վերոհիշյալ իմ հաշվի, հիշատակված են, իրոք, Սասնյան Պարսկաստանի ասպարեսը և մզոնը, վորոնց լեզու-կարությունը վորոշվում է նաև պարսկական ու հունական աղբյուրների ոգնությամբ: Իսկ այս, անտարակույս, ուշագրավ մի ասպարցոյց է, վոր Երատոսթենեսի ստադիոնի վերոհիշյալ իմ լուծումը կարելի է համարել ստույգ ու արժանի հատուկ ուշագրության:

4

Իմ «Կշիռները և չափերը» աշխատության մեջ չես փորձել էյի, բացի «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրության վկայությունից, լուսարանել նաև «Յաղագս ընթացից արեգական եւ համարոյ չափուց» հատվածի վկայությունը, վորի մեջ ողաչափության ասպարեսի յերկարությունը ցույց է տրված վնչ թե 100, այլ 107 քալ: Քննության առնելով այս նոր վկայությունը՝ յես մութն էյի համարել թե նրա «նախադրյալները և թե ամբողջ հաշիվը»: «Հարցի վերջնական պարզաբանումը — առանձնապես շեշտել էյի յես — թողնում ենք մասնագետ մետրոլոգներին և հրավիրում նրանց ուշագրությունը նաև այս յերկրորդ հաշվի վրա» (եջ 105):

Հենց այս վկայությունն իր ընդարձակ ու ուշագրավ աշխատության մեջ լուսարանել է այժմ պրոֆ. Մժիկը, վորը հին ու ստույգ է համարում միմիայն այս յերկրորդ վկայությունը՝

«Ասպարէզն է ըստ օղաչափութեան քալ ըէ. եւ քալն 2 ոտն, եւ ոտն օ.2 մատն: Եւ մզոնն է ասպարէզ: Իսկ ըստ Պարսից ասպարէզն ընթ քալ: որպէս լինել գետնաչափութեամբ մզոնն Ռ քալ» (տես Հանդ. Ամս., 1933, Թ, 3—6, եջ 293):

Տեսնենք մանրամասն, թե ինչպես է լուծում պրոֆ. Մժիկն այս նոր հաշիվը: Նա վորոշած է չեղել նախապես, վոր Պատլեմոսի «Աշխարհագրութեան» մեջ գործածված ասպարեսը, իրը հոսմեական մզոնի $1\frac{1}{7}$ մասը, ունեցած պիտի լինի 210 մետր յերկարություն: Հիմնվելով, բացի այդ, Երատոսթենեսի և Պտղմեոսի աշխարհագրական վկայությունների հատուկ իր քննության վրա՝ նա յենթադրում է, վոր Երատոսթենեսի և Պտղմեոսի տարբեր ստադիոնների չափական հարաբերությունը հավանական է ընդունել $3:4$, այսինքն՝ $157,5:210$:

Այնուհետև՝ նախնական հենց այս դիտողությունները չեղակետ են ծառայում նրան նաև հայկական վկայությունների լուծման:

Վորովհետև «Յաղագս ընթացից արեգական» հատվածում ողաչափության ասպարեսը համեմատված է Պարսից ասպարեսի հետ իբր $3:4$ ($=107\frac{1}{7}:142\frac{6}{7}$, կլոր թվով $107:143$)՝ նրան ղժվար չպիտի լիներ, բնականաբար, գտնել նրա մեջ վերոհիշյալ միևնույն չափերը: Ընդունելով, վոր Պարսից մզոնը համարվելու չէ, իրապես, հոսմեական մզոն՝ նա տալիս է վերոհիշյալ վկայության իր նոր լուծումը վորոշ մանրամասնություններով՝

1. Մզոն «գետնաչափութեամբ» կամ հոսմեական մզոն = միջին հաշվով 1480 մետր.

2. Կրկնաքալ հոսմեական = 5 վոտի 0,296 մետր յերկարությամբ = $0,296 \times 5 = 1,480$ մետր.

3. «Ըստ Պարսից ասպարէզ» $= 1\frac{1}{7}$ հոսմեական մզոն կամ $142\frac{6}{7}$ հոսմեական կրկնաքալ $= 1480:7$ կամ $1,480 \times 142\frac{6}{7} =$ մոտ 211,4 մետր.

4. Նույն ասպարեսը $= 600$ պտղեմյան վոտ 0,3524 մետր յերկարությամբ $= 0,3524 \times 600 =$ մոտ 211,4 մետր.

5. Երատոսթենեսի ստադիոն $= 107\frac{1}{7}$ հոսմեական կրկնաքալ $= 1,480 \times 107\frac{1}{7} =$ մոտ 158,57 մետր.

6. Նույն ստադիոնը $= 600$ վոտ 0,2643 մետր յերկարությամբ $= 0,2643 \times 600 =$ մոտ 158,57 մետր.

7. Փոքր մզոն $= 4000$ պտղեմյան մեծ վոտ $= 0,3524 \times 4000 = 1409,6$ մետր:

Պրոֆ. Մժիկի այս հաշիվը՝ թեև հետաքրքիր է ու ուշադրութեան արժանի, սակայն ունի ըստ իս բավականաչափ մուծ ու բացատրութեան կարոտ կետեր: Յեվ ինձ թվում է, վոր այս լուծման դեմ կարող են լինել լուրջ առարկութուններ:

Նախ և առաջ, անհասկանալի է, թե ինչու նոր այս լուծման մեջ Պարսից ասպարեսին համապատասխանող գեանաչափութեան մղոնը, վորը պարզապես պարսկական մղոն է, հավասարաչափ է ստացվել հռոմեական մղոնին: Պրոֆ. Մժիկը յենթադրում է, վոր հայկական վկայութեան մեջ, վորը հելլենական մատենագրութունից քաղված հարազատ մի բեկոր է, «Պարսից» բառի տակ պետք է հասկանալ Աղեքսանդր Մեծի ասիական-չեզիպտական աշխարհակալութունը: հետևաբար՝ «Պարսից» նշանակում է վնչ թե «պարսկական», այլ «արևել տան»:

Այս բացատրութունը, իհարկե, բունազրոսիկ է ու անհավանական:

Հելլենական մատենագիրները հռոմեական մղոնը և նրա յոթերորդամաս ասպարեսը կանվանելին, հավանորեն, վնչ թե «Պարսից», այլ կըտային նրանց այն անունները, վոր հայտնի էին հելլենական աշխարհում: Վոր վերոհիշյալ բացատրութունն անհավանական է՝ այդ չեբեում է այժմ «Մղոնաչափք»-ի նոր վկայութունից: Այդ վկայութեան մեջ Պարսից նույն ասպարեսը, հակառակ պրոֆ. Մժիկի չենթադրութեան, համապատասխան է, ինչպես տեսանք, արաբական ghalva-յին ($=230,112$ մետր), վորի համեմատութեամբ վորոշված են արաբական մղոնը և արաբական փարսախը: Ուշագրավ է նաև, վոր «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրութեան մեջ Պարսից ասպարեսն անվանված է «ասպարիզաց ասպարեզ»: Այդ վկայութունը, վոր ունի հատուկ ու հասկանալի իմաստ, վնչ թե գրչազրական սխալ է, ինչպես կարծում է պրոֆ. Մժիկը, այլ կարևոր մի ակնարկ է, վոր Պարսից ասպարեսը, լինելով Հայաստանում հանրածանոթ

տեղական մի չափ, համարվել է Պարսից մղոնի յոթերորդամասն ամենամեծ ասպարեսը:

Ինձ թվում է, բացի այդ, վոր կասկածելի կարելի չէ համարել պրոֆ. Մժիկի նաև բուն հաշիվը:

Նրա լուծման մեջ բունազրոսիկ է ու վիճելի վերոհիշյալ հատվածում մատնանշված «քայլ»-ի վորոշումը:

«Ասպարեզն է ըստ ազգայութեան — ասված է հատվածում — քայլ ճի, եւ քայլն 2 ոտն, եւ ոտն Ժ2 մատն»:

Պրոֆ. Մժիկն առաջին «քայլ»-ը չենթադրում է հռոմեական passus կամ կրկնաքայլ հավասար 5 վոտի ($=0,296 \times 5 = 1,480$ մետր), իսկ մյուս «քայլ»-ը՝ տարբեր կրկնաքայլ՝ հավասար 6 վոտի ($=0,2642 \times 6 =$ մոտ $1,5857$ մետր): Թեև նրա հաշվի մեջ հիշատակված են միայն համապատասխան վոտերը՝ 0,296 և 0,2643 մետր, սակայն միանգամայն պարզ է, վոր այդ չեբեում տարբեր կրկնաքայլը նրա հաշվի հիմնական նախադրյալներն են: Իսկ «քայլ»-երի այս տարբերումը՝ պարզապես վիճելի մի չենթադրութուն է, վոր չէ հարմարվում վկայութեան հավանական ու իսկական իմաստին:

Առանձնապես ուշագրավ է նաև այն, վոր Երատոսթեսի վոտի իր հաշվում Երատոսթեսեսի ստադիոնը չենթադրում է պրոֆ. Մժիկը վնչ թե $107\frac{1}{7}$, այլ «100 քայլ և քայլն 6 ոտն» (Երատոսթ. ստադ.՝ $158,57$ մետր, Երատոսթ. «քայլ»-ը $=158,57:100=1,5857$ մետր և Երատոսթ. վոտը $=1,5857:6 =$ մոտ $0,2643$ մետր): Ուրեմն՝ ճիշտ այնպես, ինչպես վոր մատնանշված է «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրութեան և իմ լուծման մեջ:

Այս դիտողութուններից դժվար չէ չեզրակացնել, վոր պրոֆ. Մժիկի բունազրոսիկ չենթադրութունը Պարսից աս-

¹ Վոր վերոհիշյալ «քայլ»-երը միևույն մեծութեան կրկնաքայլ են համարել՝ այդ պարզ չեբեում է «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրութեան վկայութունից, վորի մեջ ողաչափութեան ասպարեսի մասին ասված է, վոր «լինի ասպարեզն վեցհարիւր քառասուն եւ երեք ոտն միով պակաս» ($107\frac{1}{7} \times 6 =$ կրկն թվով 642 կամ 643 վոտ):

պարեսի և Պարսից մղոնի մասին, ինչպես և «քայլ»-երի նրա անհավանական հաշիվը, վիճելի լին դարձնում նրա ամբողջ լուծումը: Այդ արվեստական ու բարդ լուծումը վորը կանխորոշված է չեղել ալ նախադրյալների ոգնությամբ, ինչպես տեսնում ենք, զգվար է ընդունել զուգընթաց ու համապատասխան «Յաղագս ընթացից արեգական» հատվածի պարզ ու վորոշ վկայություններին:

5

Կարևոր եմ համարում մեջ բերել այստեղ իմ նոր դիտողությունները նաև այն մղոնի մասին, վորի համեմատ վորոշած է յեղել Երատոսթենեսն աշխարհագրական իր ստագիրոնի չերկարությունը: Այդ դիտողություններն ուղագրավ մի կովան են դարձյալ վոր կարելի յ է հին ու միանգամայն հավաստի համարել «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրության վկայությունը, վորը հիմք է ծառայել վերոհիշյալ իմ լուծման:

Երատոսթենեսի ստագիրոնի չերկարությունը ստացվել էր իմ լուծման մեջ 159,8 մետր: Պարզվում է ըստ այսմ, վոր աշխարհագրական այդ չափը տասերորդամասն ասպարես է հին չեգիպտական կամ պտոլեմյան մղոնի, վորը հոմալեցիներն անվանել էին փիլետերյան մղոն:

Պլինիոսի վկայությունից մենք գիտենք, վոր սքոչնոսը հավասար է չեղել համաձայն Երատոսթենեսի հաշիվի 40 ստագիրոնի (Nat. Hist. XII, 30, 2): Իսկ Հերոնյան հին աղյուսակի վկայությունից հայտնի չէ, վոր հին չեգիպտական ու պտոլեմյան այդ մեծ չափը հավասար է համարվել 4 մղոնի (տես Hultsch, Metrologie, էջ 612): Յեմ վորովհետև այդ սքոչնոսի չերկարությունը ճշտիվ վորոշված է, ինչպես տեսանք, 6392 մետր [ըստ Հուլլի՝ 6300 մետր], ուրեմն ճշտվում է նաև թե պտոլեմյան մղոնի չերկարությունը և թե սրա ու Երատոսթենեսի ստագիրոնի 10 առ 1 հարաբերությունը՝

1. Հին չեգիպտական կամ պտոլեմյան սքոչնոս = 4 մղոն = 40 ստագիրոն = 6392 [6300] մետր.

2. Երատոսթենեսի ստագիրոն = $\frac{1}{40}$ սքոչնոս = $\frac{1}{10}$ մղոն = 6392 [6300]:40 = 159,8 [157,5] մետր.

3. Պտոլեմյան մղոն = $\frac{1}{4}$ սքոչնոս = 10 Երատ. ստագիրոն = 6392 [6300]:4 = 1598 [1575] մետր:

4. Պտոլեմյան մղոնի և Երատոսթենեսի ստագիրոնի հարաբերությունը = 1598:159,8 = 10:1:

Արդ՝ հետաքրքիր է ու ուշադրավ, վոր հաշվական աղբյուրներում հիշատակված է Երատոսթենեսյան նաև այդ մղոնը: Սակայն նրանց մեջ համապատասխան վկայությունը պարզապես աղավաղված է, և իսկական այդ աղավաղումը վրիպել է և իմ և պրոֆ. Մժիկի ուղագրությունից: «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրության հին և ընտիր ձեռագիրներն ողաչափության այդ մղոնի մասին վկայում են, վոր «մղոնն ասպարէզ մի» (տես Վենետիկյան հրատակ. 1843, էջ 588): Իսկ «Յաղագս ընթացից արեգական» հատվածը և «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրությունը նույն մղոնի մասին ունեն տարբեր ընթերցված՝ «մղոնն է ասպարէզ» կամ «մղոնն է եւթն ասպարէզ»:

Պրոֆ. Մժիկի «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրության իր հրատարակած բնագրում «և մղոնն ասպարէզ մի» ընթերցվածն ուղղել է համաձայն Վիննայի Թ. 784 և 731 ձեռագիրների՝ «եւ մղոնն է է ասպարէզ» (տես Հանդ. Ամս., 1933, Թ. 3—6, էջ 300): Այս ուղղումը սակայն, ինչպես իրավացի կերպով մատնանշված է յեղել Վենետիկի հրատարակության մեջ, պետք է համարել անհավանական: Պահելով ողաչափության և գետնաչափության մղոնների մասին ընտիր ձեռագիրների ընթերցվածները՝ Վենետիկի հրատարակության խմբագրողն առանձնապես շեշտել է հատուկ ծանոթության մեջ, վոր «զայդ կարգ ունին ընտիր օրինակքն. զոր ոմանց հակասութիւն կարծեցեալ անշուշտ ընդ նախընթացին «մղոնն ասպարէզ մի», զհատուածը «և մղոնն է եւթն ասպարէզ» անդ փոխեալ են, և զմիւսն ի բաց բարձեալ վայրապար. զի մատենագիրս զմղոնաչափն երկատեսակ աւան-

դէ, անդ ըստ օրաշափութեան, և աստ ըստ դեանաշափութեան» (տէս Վենետ. հրատար. 1843, էջ 588, ծան. 7):

Խմբագրողի այս դիտողութիւնը, ինչպէս տեսնում ենք, հիմնավոր ե ու արժանի ուղադրութեան: Պետք ե սակայն ինկատի ունենալ, վոր բացի ծանոթութեան մեջ մատնանը ված ընթերցվածից աղճատված ե նույնպէս և ընտիր որինակների ընթերցվածը: Լինելով սքոլնոսի քառասներորդ մասը՝ Երատոսթենեսի ստադիոնը չեր կարող, իհարկե, լինել վնչ հավասարաչափ մղոնի, վնչ ել մղոնի չթերորդամասն ասպարես: Ինչ թվում ե, վոր հայերեն նախնական ընագրի ընթերցվածը պետք ե, հավանորեն, լիներ «մղոնն ասպարէզ ժ» փոխանակ «մղոնն ասպարէզ մի»: Այս ուղղումը, թեև հիմնված չե ձեռագրական ընթերցվածների վրա, սակայն կարող ե հավանական լինել, վորովհետև Երատոսթենեսի ստադիոնը, ինչպէս վերև տեսանք, տասերորդամասն ասպարես ե յեղել պտղիմյան մղոնի:

Յեթե ընդունելի համարվի այս ուղղումը՝ վերջնականապէս վորոշված կըլինեն, համաձայն «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրութեան, վնչ միայն Երատոսթենեսի ստադիոնը և նրան համապատասխանող քալը և վոտը, այլ և որաշափութեան Երատոսթենեսի մղոնը՝

1. Երատոսթենեսյան քալը=1,598 [1,575] մետր.
2. Երատոսթենեսի ստադիոն = 100 քալը = 159,8 [157,5] մետր.
3. Երատոսթենեսյան մղոն=1000 քալը=1598 [1575] մետր.
4. Երատոսթենեսյան վոտ= $\frac{1}{6}$ քալը=0,266 $\frac{1}{3}$ [0,2625] մետր.

Միանգամայն պարզ կըլինի նույնպէս, վոր Աղեքսանդրիայի հանճարեղ աշխարհագրագետն ընտրած ե յեղել իր հաշիվների համար ամենապարզ ու դյուրամատչելի չափերը, հիմք ընդունելով չափական պտղիմյան սիստեմը և հին չեփաչափական կամ պտղիմյան այն հանրածանոթ մղոնը, վորը

հետագայում անվանված ե յեղել փիլեոսերյան կամ փիլեոսերյան-հոռմեական:

Որաշափութեան կամ Երատոսթենեսյան մղոնի վերոհիշյալ վորոշումից չերևում ե, վոր այդ մղոնը և «գեանաշափութեան» կամ Պարսից նոր մղոնն ունեցել են միևնույն չեփաչափութիւնը (=1598 մետր): Կարելի յե, ուրեմն, հավանական համարել, վոր Պարսից այս մղոնը՝ հավասար լինելով հին չեփաչափական կամ փիլեոսերյան մղոնին՝ գոյութիւն ունեցած պիտի լիներ Պարսկատանում վնչ միայն Սասանյանների ժամանակ, այլ և նրանցից առաջ:

Ինչ թվում ե, բացի այդ, վոր նույն այս մղոնով են հաշվված հայկական աղբյուրներում աշխարհագրական աստիճանը կամ «մաս»-ը, վոր հանգամանորեն քննութեան ե առնված պրոֆ. Մժիկի ուսումնասիրութեան մեջ: Այդ վկայութիւններն ավելորդ չեմ համարում մեջ բերել համաձայն պրոֆ. Մժիկի նոր հրատարակութեան (տէս Հանդ. Ամս., 1933, Թ. 3 6, էջ 293, 295, 300 և 302—303, Նաև Թ. 9—10, էջ 581):

1. «Յաղագս ընթացից արեգական» հատվածում՝

«Բայց աւղաշափութեամբ երկրաշափութեան մասն ԵՃ ասպարէզ ի լայնն և չերկայնն չորեքկուսի միաչափ».

2. «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրութեան մեջ՝

«Եւ երկրաշափութեամբ մասն է հինգ հարիւր ասպարէզ չորեքկուսի. որպէս զի լինել մասինն եւ թանառն եւ մի մղոն եւ չորեակ եւ թնեակ ե քսան եւ ութեակ մի».

3. «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրութեան մեջ՝

«Բայց աւղաշափութեամբ երկրաշափութեան մասն Ե ասպարէզ ի լայնն եւ նոյնչափ չերկայնն չորեքկուսի: Որպէս զի լինել մասին ՀԱ մղոն Դ. է. Ի եւ Ը».

4. Վիեննայի Թ. 115 ձեռագրում՝

«Մասն ՀԱ մղոն է եւ Ե ասպարէզ ի լայնն եւ երկայնն չորեքկուսի միաչափ»:

5. Անանուն հեղինակի հատվածում (Փարիզի Թ. 114 ձեռագր.)՝

«Եւ մասն Շ ասպարէզ է, եւ ասպարէզն վտաւանի հեռակացութիւն է: Թաւալումն արեգական Շ ասպարէզ է եւ ասպարէզն մէկ նետաձիգ է... Շ ասպարէզն ՀՅԹ քալ է. մէկ հոլովումն ՀԲ մղոն է»:

6. Վիեննայի Թ. 678 ձեռագրում՝

«Եւ Ա մասն հոլով մի է արեգական հոլովն է Շ ասպարէզ... եւ ասպարէզն Ա նետաձիգ է»:

Պրոֆ. Մոխրիկը համարում է հին և կարևոր «Յաղագս ընթացից արեգական» հատվածի վկայությունը, վոր չունի մղոնի վերաբերյալ հատուկ հաշիվը: Ասպարեսն այդ վկայության մեջ, նրա կարծիքով, որաչափական, հավանորեն, ասպարեսն է 158,57 մետր չեղարությամբ, ուրեմն՝ աշխարհագրական աստիճանը կամ «մաս»-ը պետք է չեղած լինի ըստ այդ հաշիվի 500 Երատոսթենյան ասպարես ($=500 \times 158,57$), «Հնարավոր է — ասում է նա — վոր նման մի հաշիվ գոյություն է ունեցել հոտմեական-հելլենիստական աշխարհում, վորը մեզ չէ հասել ուրիշ աղբյուրներից»:¹

Յերկրորդ և չերրորդ վկայությունների մեջ մղոնի հաշիվը (500 ասպարես $= 71^3/7$ մղոն) նա չենթադրում է հետամուտ մի ընդմիջարկություն, վորը կարող է քաղված լինել դասական հին աղբյուրներից:² Իսկ նրանց մեջ մատնանը՝ ված մղոնը, վորը հիշատակված է նաև չորրորդ ու հինգերորդ հատվածներում, նա համարում է հոտմեական մղոն 1480 մետր չեղարությամբ:³

Ինձ թվում է, վոր պրոֆ. Մոխրիկի այս չենթադրությունները դարձյալ վիճելի չեն: Հին և լավագույն կարելի չէ համարել, ինչպես վերև տեսանք, վնչ թե «Յաղագս ընթացից արեգական» հատվածի, այլ «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրության ընթերցվածները: Իսկ վերոհիշյալ մղոնը վնչ

¹ Հանդ. Ամս., 1933, Թ. 9—10, էջ 572:

² Հանդ. Ամս., 1933, Թ. 7—8, էջ 459:

³ Հանդ. Ամս., 1933, Թ. 9—10, էջ 573:

թե հոտմեական-իտալական մղոնն է, այլ հավանորեն, հայկական վկայություններում հիշատակված Պարսից կամ հոտմեական-փրիլետերյան մղոնը, վորն իր չեղարությամբ համապատասխան է չեղել, ինչպես տեսանք, Երատոսթենյան մղոնին: Ուրեմն՝ վերոհիշյալ բոլոր վկայություններում, վորոնք ունեն մղոնի հաշիվը, աշխարհագրական աստիճանի կամ «մաս»-ի չեղարությունը հավանական է չենթադրել $500 \times 159^8/7$ [կամ $157^5/7$] $= 114^1/7$ [կամ 112,5] կիրոմետր: Իսկ չեղարի շրջապատը ստացվում է այդ հաշիվով $114^1/7$ [կամ 112,5] $\times 360 = 41.091^3/7$ [կամ 40.500] կիրոմետր: Յեթե ի նկատի ունենանք «Աշխարհացոյց»-ի համառոտ ու ընդարձակ խմբագրությունների ուշագրավ վկայությունը, վոր «մաս»-ը համարվել է 500 «ասպարիսաց չափ» վնչ թե ճշտիվ, այլ «մերձ շուրջունելությամբ» (Վենետիկ հրատար., էջ 586) կամ «մերձ շուրջունողություն» (Սուբրյանի հրատ., էջ 5)՝ դժվար չի լինի, իհարկե, չեղարակացնել, վոր «Աշխարհացոյց»-ի վկայությունները համապատասխանում են մոտավորապես Երատոսթենեսի վերոհիշյալ հաշիվին, վորը չեղարի շրջապատը չենթադրել էր $159,9 \times 252.000 = 40.269,9$ կիրոմետր [կամ ըստ Հուլիի՝ $157,5 \times 252.000 = 39.690$ կիրոմետր]:

Թե ինչու պրոֆ. Մոխրիկը վերոհիշյալ մղոնը կարծում է հոտմեական-իտալական՝ այդ դժվար չէ բացատրել:

Հեռակելով Հուլիի տեսությունն՝ նա հաստատ համոզված է, վոր չոթնասպարեսյան մղոնը միշտ և ամենուրեք պետք է լինի հոտմեական-իտալական մղոն 1480 մետր չեղարությամբ (տես Հանդ. Ամս. 1833, Թ. 9—10, էջ 571, նաև Hultsch, Metrologie, էջ 569): Սակայն այս պնդումը, վոր համարվում է աներկբայելի, հակասում է պարզապես հայկական վկայություններին: Մենք տեսանք վերև, վոր «Մղոնաչափը»-ի հաշիվում չոթնասպարեսյան է չենթադրված արաբական մղոնը ($273,9^3/7: 1917,6 = 1:7$): Յոթնասպարեսյան էր ստացվել նույն հաշիվ, ինչպես և Երատոսթենյան ստադիոնի իմ լուծման մեջ, նաև Պարսից մղոնը ($230,112$ կամ $228^2/7: 1598 = 1:7$): Ուշագրավ է նաև այն, վոր հայկական

աղբյուրները չոթնասպարեհսյան են համարել թյուրիմացաբար անգամ ողաչափության ասպարեհսին համապատասխանող Երատոսթենյան մղոնը: Այս բոլոր դիտողությունները հաստատում են ըստ իս, վոր Հայաստանում հայտնի չե չեղել, գլխավորապես, չոթնասպարեհսյան մղոնը, վորը, հավանորեն, գործածական չափ է չեղել Արևելքում հայկական վկայությունների խմբագրման ժամանակ:

Վոր «մաս»-ի վերոհիշյալ հաշվում ի նկատի չեն առնված «գետնաչափութեան» Պարսից մղոնը և նրան համապատասխանող Պարսից կամ «ասպարիզաց ասպարէզ»-ը՝ այդ կարելի չե ըստ իս կռահել հենց վկայությունների ակնարկներից, վորոնք աշխարհագրական աստիճանը համարում են 500 ասպարեհս «աղաչափութեամբ երկրաչափութեան» կամ «երկրաչափությամբ»: Ինձ թվում է, վոր «աղաչափութեամբ երկրաչափութեան» կամ «երկրաչափութեամբ» կարելի չե հասկանալ վնչ թե «աղաչափութեան» իմաստով, ինչպես յենթագրել է պրոֆ. Մոխլը, այլ «գետնաչափութեան» կամ «ցամաքաչափութեան»: Կարելի չե, ուրեմն, հավանական համարել, վոր «մաս»-ի վերաբերյալ հաշվում մատնանշված են «գետնաչափութեան» ասպարեհսը 230,112 կամ 228²/₇ մետր չերկարությունները և նրան համապատասխանող չոթնասպարեհսյան մղոնը 1598 մետր չերկարությունները: Վոր այս լուծումն անհավանական չե՝ այդ չերեվում է վերոհիշյալ հինգերորդ ու վեցերորդ հատվածների վկայություններից, վորոնց մեջ միևնույն այս ասպարեհսն անվանված է «նետածիզ»: Իսկ «նետածիզ»-ը, հավանորեն, այն արաբական ghalva-ն է (= 230,112 կամ 228²/₇ մետր), վորին համապատասխան է չեղել, ինչպես վերև տեսանք, Պարսից կամ «ասպարիզաց ասպարէզ»-ը:

6

Պրոֆ. Մոխլը քննություն է առել իր ուսումնասիրություն մեջ «Յաղագս ընթացից արեգական և համարոյ չափուց» հատվածի և «Աշխարհացոյց»-ի ընդարձակ ու համա-

ուստ խմբագրությունների ժամանակի խնդիրը և առանձնապես շեշտել է չափական վերոհիշյալ վկայությունների ծագումը հունական հին աղբյուրներից:

Տեսնենք՝ թե ինչպես է նա վորոշել հայոց մատենագրություն պատմություն կարևոր այդ խնդիրները:

«Յաղագս ընթացից արեգական և համարոյ չափուց» հատվածը նա համարում է, անպայման ու անվերապահորեն, Անանիա Շիրակացու աշխատություն: Յեվ չենթադրելով, վոր Անանիան ապրել է մոտավորապես 620—705 թվականներում, նրա այդ չերկը նա հորինված է համարում 670-ից մինչև 705 թվականները: Ներքև մենք կըտեսնենք, վոր պրոֆ. Մոխլի այս կարծիքը, վորը բնավ պատճառաբանված ու հիմնավորված չե մատենագրական կամ փաստական վորևե սպացույցներով, չերկհտ է ծառայել նրան վրձելի ու անհավանական հետևությունների:

«Աշխարհացոյց»-ի ժամանակը վորոշելիս՝ պրոֆ. Մոխլն ի նկատի չե ունեցել Պատկանյանի, Հյուբերմանի և Մարկվարտի կարծիքները: Մարկվարտը, ինչպես հայտնի չե, իր հին Eranschahr աշխատության մեջ (Berlin 1901, էջ 4—6) ուշագրավ մի կարծիք էր հայտնել, վոր «Աշխարհացոյց»-ը և Սորենացու պատմությունը պետք է համարվեն միևնույն հեղինակի չերկեր: Նա յենթագրել էր միաժամանակ, վոր «Աշխարհացոյց»-ը գրված պիտի լինի ամենականուխը յոթերորդ դարի վերջերում... կամ, հավանորեն, առաջին Աբբասյանների ժամանակ, այսինքն՝ մոտավորապես 740—790 թվականներին: Սակայն ավելի նոր իր ուսումնասիրությունների մեջ նա, հրաժարվելով իր այդ յեզրակացությունից, համաձայնել էր Պատկանյանի տեսակետին և «Աշխարհացոյց»-ը վերագրել Անանիա Շիրակացուն: Հյուբերմանի կարծիքն «Աշխարհացոյց»-ի մասին համապատասխանում է

¹ Տես Հանդ. Ամս., 1933, № 3—6, էջ 286—2 7:

² Տես „Hippolytus Werke“, Bd. IV. Nebst einem Beitrag von J. Markwart, Leipzig 1929, էջ 429—431.

մոտավորապես Մարկվարտի այս նոր չենթադրութեան:

«Աշխարհագրութեան Հայաստանով զբաղող մասը — ասուած է Հչուբըմանը — և ըստ այսմ ամբողջ գրութունը պատմութեան հեղինակինը չե: Յեվ տարակույս չկա, վոր աշխարհագրութունը զրվելու չե պատմութունից ուշ և կարող է գրված լինել ամենականուխր յոթերորդ դարում» (տես «Die altarmenischen Ortsnamen», Strassburg 1904, էջ 374):

Հիմնվելով այս հին և նոր կարծիքները վրա՝ պրոֆ. Մժիկը «Աշխարհացոյց»-ի գրութեան ժամանակը դնում է վերոհիշյալ չեղրակացութունների համեմատ 670 թվից մինչև 790 թիվը: Նա հավանական է ընդունում, վոր «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրութունը պետք է ավելի հին լինի, քան «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրութունը: ¹ Ուստի և հաշկական վերոհիշյալ չեղրակերի ժամանակը նա չենթադրում է հետևյալ հաջորդականութեամբ՝ ամենից առաջ հորինված պլատի լինի, նրա կարծիքով, Անանիա Շիրակացու «Յաղագս ընթացից արեգական և համարոյ չափուց» հատվածը, նրանից հետո՝ «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրութունը, իսկ ավելի ուշ՝ «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրութունը: ²

Ընդունելով նաև վերոհիշյալ չափական տեղեկութունների այս հաջորդականութունը՝ նա հին և առանձնապես կարևոր է համարում, բնականաբար, «Յաղագս ընթացից արեգական» հատվածի հաշիվը և ընդունում նույնպես, վոր համապատասխան մյուս հաշիվները ծագել են Անանիա Շիրակացու գրվածքից, վորի մեջ վերջինս գրել չե առել, հավանորեն, Տյուքրիտի հաղորդած տեղեկութունները: ³

Պրոֆ. Մժիկի ուսումնասիրութեան մատենագրական քննական այս նախադրյալները, ինչպես և նրանցից արված հետևութունները, նույնքան վիճելի չեն ըստ իս, ինչպես և նրա Երատոսթենյան ստագիրոնի վերոհիշյալ լուծումը: Ներ-

¹ Հանդ. Ամս. 1933, Թ. 3—6, էջ 287:

² Հանդ. Ամս. 1933, Թ. 7—8, էջ 454:

³ Հանդ. Ամս. 1933, Թ. 7—8, էջ 438, 451 և Թ. 9—10, էջ 561, 578:

ըն մենք ցույց կըտանք կետ առ կետ, թե վերջին խախուտ են նրա այդ չեղրակացութունները:

Նախ և առաջ՝ կասկածելի չե, անշուշտ, նրա պնդումը, վոր իբր թե «Յաղագս ընթացից արեգական և համարոյ չափուց» հատվածի հեղինակն Անանիա Շիրակացին է: Պետք է ասել, վոր Հար. Ավգերյանի և Ք. Պատկանյանի հրատարակութուններում այդ հատվածը վերագրված է, իրոք, Անանիա Շիրակացուն և տպագրված է անզուգուբար հետևյալ վերնագրի տակ՝ «Յաղագս ընթացից արեգական և համարոյ չափուց ըս կրկին օրինակաց Շիրակացույն» (տես Ավգերյան, «Բացատրութիւն չափուց եւ կշոոց նախնեաց», էջ 37 և Ք. Պատկանյան, «Անանիայի Շիրակունւոյ մնացորդք բանից», էջ 32): Այս վերնագրից ստացվում է, իհարկե, այն տպավորութունը, վոր այդ հատվածը Շիրակացու աշխատութունն է: Սակայն թյուրիմացութունը պրոֆ. Մժիկին ևս կարող էր պարզ լինել, յեթե նա ուշագրութեան առնելը Ավգերյանի հետևյալ ծանոթութունը՝

«Ձկնի առանձինն կարգելոյ ի նախադրունս գործոյս համառօտ ծանօթութեամբք զբանս Եպիփանու. Շիրակացույն, և Պորինացույն՝ կարևոր դատեցաք ուրոյն արձանացուցանել և զբանս Դ և Ե օրինակաց Շիրակացույն. որ է կարճ ի կարճոց և ընտիր բովանդակութիւն երեցունց նախակարգեալ զործոցդ: Եւ թէ պէտ ոչ կրէ նա ի ճակատու դանուն Շիրակացույն, ալ մեք նմին ընծայեմք և գայս՝ վասն լինելոյ գէթ համառօտութիւն ինչ կշոոց և չափուց նորին. վասն որոց և ի վերնագիրս անխիղճ հեղք դանուն Շիրակացույն՝ զկնի ճակատու երկոցունց օրինակացդ» («Բացատրութիւն», էջ 37, ծան. 1):

Ավգերյանը, ինչպես տեսնում ենք, վերոհիշյալ գրութունն ընծայել է Շիրակացուն՝ յենթադրելով համառոտութուն նրա կշոոցների և չափերի: Սակայն, իրապես, «Յաղագս ընթացից արեգական և համարոյ չափուց» հատվածն ունի նաև վկայութուններ Հին և Նոր Կտակարանների կշիռ-

